ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԱՌԻԿ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան 23.02.2022 թ.

«Արմավ հրատարակչություն» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Արմինե Քոչարյանի, այսուհետ՝ Հրատարակիչ, մի կողմից, և Արարատ Աղասյանը, հանդիսանալով «Արվեստի պատմություն. Կերպարվեստ» (գիրք 3), այսուհետ՝ Կատարող, մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ կնքում են սույն բացառիկ պայմանագիրը հետևյալի մասին.

Ընդհանուր դրույթներ

1. Կատարողը Հրատարակչին է տալիս իր հեղինակած «Արվեստի պատմություն. Կերպարվեստ» (գիրք 3) գիրքը, այսուհետ՝ Նյութ, որպես տպագիր և էլեկտրոնային գրքեր Հայաստանում և արտասահմանում սույն պայմանագրի ժամկետների շրջանակում հրատարակելու բացառիկ իրավունքները:
2. Սույն պայմանագրի առարկա հանդիսացող Նյութի հրատարակման իրավունքը պատկանում է Հրատարակչին: Կատարողը իրավունք չունի տրամադրելու դրանք որևէ այլ հրատարակչության, որևէ այլ մամնի կամ ՁԼՄ-ի, տեղադրել համացանցում ամբողջովին կամ հատվածաբար, վերամշակված կամ փոփոխված ձևով, Հայաստանում կամ արտերկրում, առանց Հրատարակչի հետ նախօրոք ձեռք բերված պայմանավորվածության:
3. Կողմերի միջև հաղորդակցությունը կարող է իրականացվել էլեկտրոնային կարգով, Կողմերի էլեկտրոնային փոստի միջոցով, ընդ որում Հրատարակչի էլեկտրոնային փոստի հասցեներն են armav1815@gmail.com-ը և armav-hrat@yandex.ru-ն, իսկ Կատարողինը՝ instart@sci.am:
4. Կատարողը Նյութը (A4 ֆորմատ, 12 տառաչափ, 30-32 տող, առնվազն 150 էջ) հանձնում է Հրատարակչին էլեկտրոնային տարբերակով, Unicode տառատեսակով, սրբագրված, ավարտուն տեսքով, հետագա արմատական փոփոխություններ բացառող վիճակում:
5. Աշխատանքն ընդունելուց հետո, որը չի կարող լինել ավելի ուշ քան 23.08.2023 թվականը, Հրատարակիչը պարտավոր է իրականացնել խմբագրական-սրբագրական աշխատանքներ:
6. Աշխատանքի ընթացքում ցանկացած արմատական փոփոխություն կատարելիս՝ Հրատարակիչը դրանք քննարկում է Կատարողի հետ: Կատարողը պարտավոր է առանց լրացուցիչ վճարումների իրականացնել առաջարկված փոփոխությունները:
7. Կատարողը երաշխավորում է, որ հանդիսանում է Նյութի հեղինակ և չի վերցրել այն երրորդ անձանցից: Երրորդ անձանց հետ հնարավոր բոլոր խնդիրների լուծումն իր վրա է վերցնում Կատարողը:
8. Հրատարակիչը պարտավորվում է չխախտել Կատարողի անվան իրավունքը և չհրատարակել Նյութը կեղծանունով:
9. Հրատարակիչը իբրև հոնորար Կատարողին պարտավոր է վճարել 1.280.000 (մեկ միլիոն երկու հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ հարկերը):
10. Հրատարակիչը պարտավոր է ճիշտ ժամանակին կատարել բոլոր վճարումները:

Վճարման ձևն ու ժամկետները

11. Հրատարակիչը Կատարողին վճարում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ վերը նշված հոնորարի 25%-ը յուրաքանչյուր եռամսյակի վերջում:

12. Հրատարակիչը Կատարողին անվճար հատկացնում է գրքից 5 օրինակ:

Եզրափակիչ դրույթներ

13. Սույն Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 տարի: Պայմանագրի ժամկետի լրանալուց հետո նոր հրատարակության առաջնությունը տրվում է Հրատարակչին:

14. Պայմանագրով չկարգավորված հարցերը կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Համագործակցության ողջ ընթացքում Հրատարակիչը և Կատարողը պարտավորվում են առաջնորդվել փոխադարձ բարենպաստության սկզբունքով:

16. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Եթե բանակցությունները արդյունք չեն տալիս՝ դատական կարգով:

17. Պայմանագիրը Կատարողի նախաձեռնությամբ ժամկետից շուտ խզելու դեպքում Կատարողը պարտավոր է Հրատարակչին փոխհատուցել գրքի հրատարակման բոլոր ծախսերը, այդ թվում խմբագրական-սրբագրական աշխատանքները, դիզայնը, տպագրությունը, գովազդային, մարկետինգային, տարածման ծախսերը:

18. Պայմանագրի լրացումները, փոփոխությունները, լուծարումը կատարվում է Կողմերի համաձայնությամբ:

19. Պայմանագիրը լուծարելու դեպքում վերադարձվում են մինչ այդ վճարված գումարները:

20. Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից: Օրինակները տրվում են Կողմերից յուրաքանչյուրին և ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Կողմերի իրավաբանական հասցեները

Հրատարակիչ՝ «Արմավ հրատարակչություն» ՍՊԸ Շիրազի 24/48 ՀՎՀՀ 01268487 «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շահումյան մ/ճ 16302 8046312 Տնօրեն Կ. Քոչարյան	Կատարող ՝ Արարատ Աղասյան անձ. AM 0858312 տրված 04.09.2012 թ, վավեր մինչև 04.09.2022, տրված 006–ի կողմից հասցե՝ ք. Երևան, Սիսակյան փ., 20 շ., 13 բն Սոց. Քարտ – 2108560114